№ 8 ԹԷՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐ 21 **1896** ԹԷՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐ 21 № 8

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

# ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակւում է ամեն չորեքշաբթի օրերը

*Տարեկան գինն է Թէհրանում 12 ղռն. վեցամսեան 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղ. վեցամսեան 8 ղ. Ռուսաստան 3 րուբլի. վեցամսեան 2 րուբլի. Օտար երկիրները 8 ֆրանք. վեցամսեան 5 ֆրանք: Հասցէ՝ Téhéran. Rédaction* ASTCH-ARBVELIAN

*«ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆԻ» Խմբագրութիւնը բաց է ամեն օր բացի կիւրակի եւ տօն օրերն:*

*Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով. իւրաքանչիւր բառին 1 շահի:*

## ԲԱՑՒԵԼ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ 1896 Թ.

**Ա. Տ. „ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ“ Ա. Տ.**

Բաժանորդագինն է Թէհրանում տարեկան 12 ղռան վեցամսեայ 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղռան, վեցամսեայ 8 ղռան: Ռուսաստան տարեկան 3 րուբլի վեցամսեայ 2 ր. Օտար երկիրներ 8 Ֆրանկ վեցամսեա 5 ֆ: Թէհրանում ձեռքով ծախուածները հատը 6 շահի: բաժանորդագինը կանխիկ է:

Բաժանորդագրութեան համար դիմել ուղղակի խմբագրութեան:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

----

Անհատներ, ընդհանրական գործի մէջ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Դավրէժից. Պարսկահայոց կրթական վիճակի վրայ մի ակնարկ. ԲԺՇԿԱԿԱՆ Առողջութեան արժէքը. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Այլեայլք. Աստղ-Արեւելեանի պատասխաններ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Դէպի Հայաստան. Կեանքի պատկերներ:

### ԱՆՀԱՏՆԵՐ, ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՄԷՋ

----

Շատերը դիմում են մեզ և միամտաբար յիշեցնում թէ «Աստղ-Արեւելեան» ընկերութիւնը իւր մի յայտարարութեամբ խոստացաւ հրատարակել մի թերթ, կատարելապէս զուրկ՝ անհատական հաշիւներից. երբ բացատրութիւն ենք պահանջում, իբր օրինակ ցոյց են տալիս «Աստղ-Արեւելեանի» լոյս տեսած համարներից մի քանի կտորներ, որոնք վերաբերում են հոգեւոր իշխանութեան, ուսուցիչների, մի ազգային մարմնի, մի հասարակական դասախօսի (իր կարծիքով) եալլն եալլն: Այս տեսակ դիտողութիւններ մեզ ցոյց են տալիս, որ դեռ ես այդ պարոնները գաղափար չունին «անհատական հաշիւ» կոչուած բառերի իմաստի վրայ և սոխալ շփոթում են ընդհանրական գործի հետ. կամ թէ ընդհանրական մի գործի վարիչ անհատ չէ նշանակում. ի հանգստութիւն այդ տեսակ մարդերի աւելորդ չենք համարում միքանի խօսքերով պարզել այդ զանազանութիւնը: Օրինակ՝ երբ մի որեւիցէ տիրացու, որ երէկ ծառայում էր մի մասնաւոր առեւտրական տնում, նա մի անհատ էր բառիբուն նշանակութեամբ. նրա կեանքը այնքան էլ հետաքրքրելի չէր լրագրութեան համար, բայց այս օր երբ այդ միեւնոյն անհատը քահանայ ձեռնադրուելով մի ամբողջ թեմ կառավարելու և նրա հոգեւոր պէտքը մատակարարելու պաշտօնը ստանձնեց և հասարակութիւնը պարտք համարեց իւր շրթունքները մօտեցնել նրա ձեռքերին, նա այլեւս դարձաւ հասարակական պաշտօնեայ և իրաւունք տուաւ լրագրութեան իւր պաշտօնի վերաբերեալ գործունէութեան հաշիւը պահանջելու: Երբ մի մարդ. իւր տան չորս պատերի մէջ բղաւում է, երգում, ճառեր արտասանում միայն իւր ընտանիքին զբաղեցնելու մտքով, ինչպէս լրագրութիւնը իրաւունք չունի քննադատութեան ենթարկելու նրա տաղանդի զօրութիւնն. բայց երբ նա բարձրանում է հասարակաց բեմի վրայ, ցանկանում է հարիւրաւոր ունկնդիրներն իւր տաղանդով զբաղեցնել, բարոյական դասեր խօսել՝ այն ժամանակ իրաւունք է տալիս լրագրութեան այդ տաղանդի աստիճանները և սահմանը գծագրելու և հասարակաց դատաստանին յանձնելու:

Երբ որեւիցէ մի անհատ, ծառայում է մի մասնաւոր ընկերութեան շահերին լրագիրը իրաւունք չունի քննադատելու թէ արդեօք նա բարեխղճօրէն է ծառայում. իսկ երբ թողնէ այդ մասնաւոր ընկերութիւնը, մտնէ մի դպրոց և ձեռք առնէ մատաղ սերունդ կրթելու ծանր և պատասխանատու պաշտօնը, այն ժամանակ կատարելապէս ենթարկւում է լրագրութեան լուրջ և անկողմնակալ քննադատութեան:

Մի խօսքով, հոգաբարձու, պաշտօնի գլուխ եղող հոգեւորական, ուսուցիչ, հրապարակախօս, հասարակական բեմ բարձրացող քարոզիչ, երաժիշտ, երգիչ, և այլն սոքա անհատներ չեն, այլ ընդհանրական գործի յառաջադիմութեան կամ յետադիմութեան պատասխանատու անձնաւորութիւններ, որ ամեն օր, ամեն ժամ, ամեն րոպէ լրագրական լուրջ և ազնիւ կրիտիկայի մտնելու և շարունակ իրենց տաղանդի հաշիւը ներկայացնելու պարտաւոր են: Եւ երբ մի լրագիր խօսում է դրանց վրայ՝ նա կատարում է իւր վրայ դրուած պարտաւորութիւնը, հեռացրէք նրանց այդ պաշտօններից, այն ժամանակ միայն կը դառնան անհատ և հետեւապէս նրանց համար կը լռէ և լրագիրը:

Վաղարշակ Բժշկեանց

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

----

8 փետր. 96.

Յարգելի խմբագրութիւն Աստղ-Արեւելեան շաբաթաթերթի:

Խնդրում եմ տեղ տաք յարգելի թերթիդ յառաջիկայ համարներից մէկի անկիւնում յետեւեալ նամակիս:

Ձեզ յայտնի կլինի վերջին ներկայացման ժամանակ տեղի տուած մաւշտէկաւն, որը պատահեց Արամեան դպրոցի երկու ուսուցիչների և մի տեղացի երիտասարդի մէջ, պատճառն հետեւեալն էր. տեղացի պարոնը ծաղրել է նրանց մի երգչին, որն ուզել է երգել մի ինչ որ երգ, բայց չի կարողացել. այդ պատահական առթից օգտուելով նախապատրաստուած պարոնները թողին ներկայացումն և սկսեցին մաւշտեկաւն. իսկ մեր Հայր Փոխանորդը փոխանակ պատժելու մեղաւորներին՝ փակեց բեմի դռներն. միթէ հասարակութիւնը մեղաւոր է որ մի քանի անհատների համար զրկուէ իւր ներկայացումներից: Մինչեւ այսօր լռել ենք, սպասելով որ Հայր Փոխանորդը վերջապէս կփոխէ իւր վճիռն և կբացէ բեմի դռները սիրողների առաջ. թէպէտ մինչեւ այսօր սպասելներս ու յոյներս ապարդիւն անցան, բայց կրկին յոյս ունինք, որ Հայր Փոխանորդն կզիջանէ հասարակաց թախանձանքին և կփոխէ իւր վճիռն:

Յայտնի է ձեզ նոյնպէս Մեծ Մոջտեհետի մահուան լուրը, որի մասին գըրած էի նախկին նամակովս. ինչպէս օրէնք է պարսիկների մէջ՝ հանգուցեալի համար թաղիայ բռնեցին ինչպէս հարկն էր, նոյն իսկ հայերն էլ չմոռացան կատարել իրենց պարտականութիւնը. 70—100 թումանի չափ վճարեցին և իրենց փոխարէն Դալ-զալ Մզկիթում թազեայ բռնել տուին:

Ոսկան

